

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

04 հունիսի 2018թ.

*Ներկա էին*՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

*Նախագահ*՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

*Գիտական քարտուղար*՝ ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքների քննարկում:  
Զեկուցող՝ Ա. Սաղյան
2. Ընթացիկ հարցեր:

**ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքների քննարկում:

*Լսեցին՝* Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով նշեց, որ 2017-2018 ուսումնական տարում ևս հաջողությամբ կարողացանք կազմակերպել պետական քննությունների, ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունների անցկացումը: Այս ուսումնական տարում, արդեն երկրորդ անգամ, պետական քննություններն անցկացվեցին բանավոր կարգով, ինչը վառ ապացույցն է այն բանի, որ այս կերպ

ուսանողներին հնարավորություն է ընձեռվում առավելագույնս դրսևորել իրենց գիտելիքները, իսկ դասախոսական անձնակազմին օգնում օբյեկտիվ գնահատման հարցում:

Ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների մասին կարծիք հայտնելու համար Ա. Սադյանը ձայնը տվեց հանձնաժողովի նախագահ Է. Սեկոյանին: Վերջինս նշեց, որ ընդհանուր առմամբ գոհ է պաշտպանության ներկայացված աշխատանքներից, չնայած, որ կային նաև այնպիսի աշխատանքներ, որոնցում փորձարարական մասը թույլ էր արտահայտված: Է. Սեկոյանը առաջարկեց ամբիոնների վարիչներին մինչ նախապաշտպանությունը բոլոր ուսանողներին ևս մեկ անգամ ծանոթացնել ավարտական և մագիստրոսական աշխատանքներին ներկայացվող պահանջներին՝ հետագայում անճշտություններից և որոշ թերություններից խուսափելու համար:

- Ինչ կարծիքներ կա՞ն այս հարցի վերաբերյալ:

**Ելույթ ունեցան՝** Փոխտնօրեն Ս. Վարդապետյանը, բ.գ.դ., Ռ. Հովհաննեսյանը, կ.գ.թ.

Ա. Հովհաննիսյանը, ովքեր նշեցին, որ պետական քննությունների անցկացման բանավոր կարգն, իհարկե, ավելի արդյունավետ է ուսանողները և քննական հանձնաժողովի անդամները գոհ են բանավոր քննության արդյունքներից: Գիտխորհրդի մյուս անդամները ևս միաձայն փաստեցին, որ բանավոր պետական քննությունն, իսկապես, արդարացված է: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Հ. Միմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր կարծիք հայտնեցին, որ ցանկալի կլիներ նաև, որ բոլոր ղեկավարներին տրվեր ելույթ ունենալու հնարավորություն:

Գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը շեշտեց, որ ղեկավարները միշտ էլ հնարավորություն են ունեցել իրենց խոսքն ասելու համար, սակայն ավելի լավ կլիներ ղեկավարին լսել միայն այն դեպքերում, երբ կան որոշակի դժգոհություններ ուսանողի և վերջինիս աշխատանքի վերաբերյալ: Ա. Սադյանը հորդորեց ամբիոնների վարիչներին լինել ավելի հետևողական՝ սահմանված ժամկետների պահպանման, նախապաշտպանությունների պատշաճ կազմակերպման հարցում, ինչպես նաև ուշադրություն դարձնել այն

հանգամանքին, որ մագիստրոսական թեզերն իրենց մակարդակով էապես տարբերվեն ավարտական աշխատանքներից:

**Որոշեցին՝** (միաձայն) դրական գնահատել 2017-2018 ուս. տարում անցկացված պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքները:

### **3 Ընթացիկ հարցեր:**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչներին և ուսումնական հարցերի գծով փոխսնօրեն Ս. Վարդապետյանին, ովքեր տեղեկացրեցին, որ ամբիոններում դասաբաշխումներն արված են և բոլոր դասախոսներն ապահովված են համապատասխան դրույքաչափերով:

Ս. Վարդապետյանը, ընթացիկ հարցերի շարքում հարկ համարեց հիշեցնել այն մասին, որ այն լաբորատորիաները, որոնք իրենց գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործում են թմրաբեր ազդեցություն ունեցող նյութեր, յուրաքանչյուր եռամսյակը մեկ պետք է ներկայացնեն հաշվետվություն՝ դրանց ծախսերի վերաբերյալ:

**Որոշեցին՝** տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա.Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան